

ԿԻՍՏԱԿԱՆ ՇԱՅԿԱՆ ՁԻՆ ՄԱՐԴԸ ՄԻԱՀԱՄՈՒՌ ՊԱՀԱՆՋԸ

ՖԻԶԻԲԱՊԵՍ ՎՈՂՆՉԱՑՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲՈԼՈՐ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻՆ

ՄՈՍԿՎԱ, 26.— Տրոցկիստական գեղի նկատմամբ մեծ ցասումով են լցված մեր հզոր Հայրենիքի միլիոնավոր աշխատավորների սրտերը: Ամբողջ յերկրում տեղի յեն ունենում միտինգներ, վորտեղ աշխատավորները քննարկում են տրոցկիստական բանդայի՝ Պյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Սերբերյակովի և մյուսների հրեշավոր նենգութունների նյութերը:

Մոսկվայի «Կրասնի Բոգատիր» գործարանի 10 հազարանոց կոլեկտիվն ամենախիստ պատիժ պահանջելով Հայրենիքի դավաճանների, ֆաշիզմի գործակալների համար, հայտարարում է, թե՛ «ի պատասխան կուսակցության ու խորհրդային կոլեկտիվային թշնամիների դատաւարության թշնամիների, մենք ել ավելի սերտորեն կհամախմբենք մեր շարքերը կոմունիստական կուսակցության և ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը»:

ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի գիտնականներն ու գիտական աշխատողներն իրենց բանաձեւերի մեջ հավատարեցնում են կատարյալութանը, վոր բոլոր ուժերը գործկզենն ջիտիական արդյունաբերությունը զարգացնելու և մեր յերկրի պաշտպանունակությունն ել ավելի ամրացնելու համար:

Բժիշկների կատարելագործման կենտրոնական ինստիտուտի (Մոսկվա) գիտություն վաստակավոր գործիչ պրոֆեսորները, դոցենտներն ու դասախոսներն, այդ թվում գիտություն վաստակավոր գործիչներ՝ պրոֆեսորներ Բրոնները, Պլեանիվը, Սպերանսկին, Պեվզները, Պուրիան, Մոկոպը, Միսինը, Շերենզվակին և Վլինչևսկին՝ իրենց արհամարհանքն ու ատելությունն արտահայտելով այն սրիկաների ու մարդասպանների վճռմակի նկատմամբ, վորոնք Գիտապոյի գործակալ հուդա Տրոցկու ցուցումով դավաճանել են մեր

թանկագին Հայրենիքին, — պահանջում են ֆիզիքապես բնաջինջ անել Հայրենիքի այդ դավաճաններին և խտապուշն պատասխանատվության յենթարկել Բուխարինին, Ռիկովին ու նրանց գործակիցներին:

Բոլոր ծովերից ու ուլկիտոսնեբրից, վորտեղ խորհուրդների յերկրի դրոշակի տակ լողում են Սեյմոնովյան նավատորմի նավերը, ուսդիոգրամներ են ստացվում նավատարիների միտինգների մասին: Բոլոր բանաձեւերի մեջ նավատարները պահանջում են վոչնչացնել կատարած շեքերին, վորոնք հանդեսն են ձեռք բարձրացնել ժողովուրդների սիրելի առաջնորդ Թանկագին ընկեր Ստալինի վրա:

Գործարանի հանքերում, գործարաններում, յերկաթուղային կայարաններում ու կոլանտեսություններում, շարունակվում են բազմամարդ միտինգները: Ստալինսկի մետալուրգիական գործարանի բանվորների բազմահազար միտինգը միաձայն ընդունած իր բանաձեւի մեջ պահանջում է գնդակահարել դավաճաններին ու մարդասպաններին:

Բազմամարդ միտինգների վերաբերյալ հաղորդագրություններ են ըստացվում, նաև Հեռավոր Արևելքից, Հայաստանից, Ստալինգրադի, Եսրոսլավի, Վիննիցայի, Գորկու մարզերից, Արևմտյան Սիբիրից, Բելոռուսիայից և յերկրի այլ շրջաններից:

Միահամուռ կերպով պահանջելով վոչնչացնել ֆաշիստական բանդային՝ մարդկային հասարակություն տակաճներին, միլիոնավոր աշխատավորները կրկին անգամ հայտարարում են իրենց պատրաստակամությունը՝ ամեն բոլոր նվիրելու իրենց կյանքը հանուն ստալինյան Սոսմանադրություն, հանուն իրենց հզոր սոցիալիստական Հայրենիքի, հանուն ժողովուրդների սիրելի առաջնորդ մեծ Ստալինի:

«ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍԱՎՐԱՏՈՐՆԵՐԻՆ»

Որորի վրա ավելի բուռն ու անզուսպ է դառնում մեր յերկրի աշխատավորների ցասումը Հայրենիքը վաճառքի հանած հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի անդամների՝ Պյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի և մյուսների նկատմամբ, վորոնց հա հանդիսական գործունեությունը դատավարություն ընթացքում բացահայտվում է իր ամենանորվալի մասնաբաժանություններով:

Ամենուրեք զայրույթի միտինգներում ու ժողովներում շնչում է գործարանների ու հիմնարկ-ձեռնարկությունների բանվորների, ծառայողների, ինժեներ-տեխնիկների խոսքը՝ միմյև կիսրիմ մարդը գնդակահարել տրոցկիստ-ֆաշիստ սրիկաներին:

Բուռն ցասման խոսքերին հետևում են գործնական առաջարկներ՝ ամեն կերպ բարձրացնել մեր յերկրի պաշտպանունակությունը, պատրաստելու նորանոր ողջուներ, խտացնելու վորոշիլովյան հրաձիգների շարքերը:

Յերենվանի Պալ-ավիաբիմալաններին կոլեկտիվի ժողովի կողմը՝ աշխատավորների սեփական միջոցներով «ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍԱՎՐԱՏՈՐՆԵՐԻՆ» ինքնաթիռային եսկադրիլիա կառուցելու մասին, լայն արձագանք դատով գործարանների, հիմնարկ-ձեռնարկությունների բանվորների, ծառայողների շրջանում:

«ԱՐԱՐԱՏ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

— Այս միայն նյութական ոժանդակություն, այլև մեր կյանքն անգամ շենք խնայի մեր պետության ուղղման հզորության մարտալեզման ու սոցիալիստական Հայրենիքի բարգավաճման համար, — հայտարարեց «Արարատ» գործարանի գեներալ-մեյթր ստախանովական բանվոր ընկ. Վահան Ներսիսյանն այն միտինգում, վորը գումարվել էր «ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍԱՎՐԱՏՈՐՆԵՐԻՆ» ինքնաթիռային եսկադրիլիա կառուցելու առաջարկի առթիվ:

Գործարանի բոլոր ցեխերի բանվորները վորոշեցին՝ վորպես պատասխան նողկալի Պյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Սերբերյակովի

և մյուսների տեռորիստական բանդայի անարգ դավաճանություն, մեկ որվա աշխատավարձը (վորը կազմում է 7000 ռուբլի) հատկացնել եսկադրիլիայի կառուցման ֆոնդին:

ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Կոնսերվի գործարանի բանվորություն թուղիկ միտինգը վորոշեց «ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍԱՎՐԱՏՈՐՆԵՐԻՆ» եսկադրիլիայի կառուցման ֆոնդը մուծել իր մեկ որվա աշխատավարձը:

— Ի պատասխան տրոցկիստ սրիկաների, յես հայտարարում եմ, վոր ժամկետից շուտ կավարտեմ ողջաշուական դպրոցը և ժամ առաջ կըկանգնեմ Հայրենիքիս պաշտպանության դերքերում, — ասում է յերիտասարդ բանվոր Հայկ Գնունին, վորն ասանց արտադրությունից կարվելու սովորում է ողջաշուական դպրոցում:

ԿԱՈՒՋՈՒԿԵՆՆՈՒՄ

Կառուցվելի մի շարք ցեխերում այդ առթիվ կայացած ժողովներում եսկադրիլիա կառուցելու առաջարկը բուռն խանդավառություն բնորոշեցին:

— Ի պատասխան տրոցկիստական վճռմակի նախորինակը չունեցող դավաճանական գործունեություն, — ասում է զնկեր Մանուկ Ուլոյանը, — մենք պետք է ել ավելի ուժեղացնենք մեր յերկրի Հոբոությունը և բոլորս տիրապետենք ուղղմական տեխնիկային: Ընկեր Մանուկ Ուլոյանի առաջարկը՝ մեկ որվա աշխատավարձը մուծելու «ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍԱՎՐԱՏՈՐՆԵՐԻՆ» ինքնաթիռային եսկադրիլիա կառուցելու ֆոնդը, միտինգն ընդունում է միաձայն:

Կարբիլի, Կրի գործարանների, կարբիլի սառեցման և թմբուկի ցեխերի բանվորները մրցման հրավիրեցին Կառուցվելի առաջին և յերկրորդ յոնարարական մասերի, Կ' ուղեկանի Բ' ու կոմբինատի ու Յերենվանի տրամվայի բանվոր-ծառայողների կոլեկտիվներին: